ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«15» մարտի 2024 թվականի N 56-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 2/14 ՀԱՍՑԵԻ 145.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի № 2/12 հասցեի 1016.65 (մեկ հազար տասնվեց ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և շինությունները սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1142090 վկայական):

Քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28022024-08-0025 վկայական) Լալայան փողոցի № 2/14 հասցեի 145.2 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 23-ին № 3639 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի № 2/12 հասցեի 1016.65 (մեկ հազար տասնվեց ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Լալայան փողոցի № 2/14 հասցեի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 145.2 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 992296 (ինը հարյուր իննսուներկու հազար երկու հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

| Կողմ (24) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Տ.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Ն.Պողոսյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Ն.Ղազարյան
Ք.Հարությունյան
Ջ.Միքայելյան
Ա.Մաթևոսյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Հ.Ստեփանյան
Գ.Մանուկյան
Ս.Ադամյան
Կ.Մալխասյան
Կ. Ասատրյան
Հ.Մարգարյան
Վ.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՍ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ — ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք.Գյումրի
«15» մարտի, 2024 թվական